

REEBOK Sport Club Armenia վարկային քարտի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը

Տարեկան փաստացի տոկոսադրույքի բանաձևի հաշվարկման բացատրություններ

Բանկը իր կողմից տրամադրած վարկի դիմաց հաշվարկում է տարեկան փաստացի տոկոսադրույք (Annual Percentage Rate կամ APR)՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախս՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

- **i** – տարեկան փաստացի տոկոսադրույք,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **n** – վարկի մարմանն ուղղված վճարի թիվ,
- **N** – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ,
- **K_n** – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար,
- **D_n** – վարկի տրամադրման օրվանից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Ենթադրենք բանկը սպառողին տրամադրում է REEBOK Sport Club Armenia վարկային քարտ հետևյալ պայմաններով՝

- Վարկի գումար – 700,000 ՀՀ դրամ,
- Անվանական տարեկան տոկոսադրույքը – 18 %,
- Վարկի մարման ժամկետը – 12 ամիս,
- Վարկի մարման եղանակը – անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը մարվում է ամենամսյա հավասարաչափ),

Վարկի տրամադրման դիմաց առկա են վճարներ՝

- Վարկային հայտի ուսումնասիրման միանվագ վճար – 1,000 ՀՀ դրամ,

Անուիտետային եղանակով վարկի մարման դեպքում անհրաժեշտ է որոշել վարկի մարմանն ուղղված ամսական վճարի գումարը, հետևյալ բանաձևով՝

$$K = A \times \frac{(1+R)^P \times R}{(1+R)^P - 1}$$

Որտեղ՝

- **K** – ամսական վճար,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **R** – տոկոսագումար (նշվում է ամսական տոկոսադրույքը, օրինակ՝ $(18/12) / 100 = 0.015$)
- **P** – վարկի մարման ժամկետ (ամիսներով),

Յուրաքանչյուր ամիս վարկի մարման գծով ամսական վճարը կկազմի՝

$$700,000 \times \frac{(1+0.015)^{12} \times 0.015}{(1+0.015)^{12} - 1} = 64,176$$

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես K_1 լրացվում է Վարկային հայտի ուսումնասիրման միանվագ վճարը 1,000 ՀՀ դրամ:

Այսպիսով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$700,000 = \frac{1,000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{64,176}{(1+i)^{\frac{30}{365}}} + \frac{64,176}{(1+i)^{\frac{61}{365}}} + \dots + \frac{64,176}{(1+i)^{\frac{365}{365}}}$$

$$i = 0.1995 \times 100 = 19.95\%$$

Բանկի կողմից առաջարկվող վերոհիշյալ պայմաններով վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 19.95 %: